

Ավանդների հատուցման երաշխավորող սահմանաչափեր

Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	16 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	7 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք ն ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ և եթե դրամային ավանդը գերազանցում է 7 միլիոն դրամը	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
Եթե նույն բանկում ունեք ն ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ և եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Վեճերի լուծման կարգը

Ժամկետային ավանդի պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

Եթե Ձեր կողմից Բանկի նկատմամբ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցում 10 միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք գումարն այլ արժույթով, վեճը կարող է լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկը հրաժարվում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, եթե Ձեր կողմից Բանկի նկատմամբ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցում 250,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, և գործարքի գումարը չի գերազանցում 500,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Տոկոսագումարի հաշվարկման բանաձևը և ներկայացուցչական օրինակ

Տոկոսագումարի հաշվարկն օրական կտրվածքով կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Մայր գումար} \times \text{Տոկոսադրոյք}$$

365 (կամ 366՝ Նահանջ տարվա դեպքում)

Մայր գումարը տվյալ օրվա դրությամբ ժամկետային ավանդի մնացորդն է:

Տոկոսադրոյքը տվյալ ավանդի և ժամկետի համար սահմանված տարեկան անվանական տոկոսադրոյքն է:

Օրինակ 3. Մեկ ամսով կնքված ստանդարտ ժամկետային ավանդի տոկոսագումարի և ավանդի վերջնական մնացորդի հաշվարկ

Ժամկետային ավանդի պայմաններ

Ավանդի սկզբնական գումար	1,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ	1 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	3%
Հաշվետու տարվա օրերի քանակ	365
Ավանդի փաստացի օրերի քանակ	30

Հաշվարկված տոկոսագումար 30 օրվա համար = 2465.75 ՀՀ դրամ

Տոկոսային եկամտից հարկ՝ 10% = 2465.75 × 10% = 246.58 ՀՀ դրամ

Վճարված զուտ տոկոսագումար = 2465.75 – 246.58 = 2219.18 ՀՀ դրամ

Ավանդի վերջնական գումարն ավանդի ժամկետի վերջում (մայր գումար + զուտ տոկոսագումար) կազմում է 1,002,291.18 ՀՀ դրամ

Օրինակ 4. Տարեկան տոկոսային երկամտաբերության հաշվարկման բանաձև և ներկայացուցչական օրինակ

Ժամկետային ավանդի պայմաններ

Ավանդի սկզբնական գումար	1,000,000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ	1 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	3%
Հաշվետու տարվա օրերի քանակ	365
Ավանդի տեսակ	Ստանդարտ ժամկետային ավանդ

$APY = (1+r/n)^n - 1$ որտեղ՝

APY – ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունն է

$r = 0.03$ (3%), որն ավանդի տարեկան անվանական տոկոսադրույքն է

$n = 12$, որը կապիտալացումների քանակն է մեկ տարվա ընթացքում կապիտալացման հնարավորության դեպքում

$APY = (1+0.03/12)^{12} - 1 = 3.04\%$



Թողարկված է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում է Էյչ-Էս-Բի-Սի իսթրի անդամ, որն աշխարհի ֆինանսական և բանկային ծառայություններ տրամադրող խոշորագույն կազմակերպություններից մեկն է: Էյչ-Էս-Բի-Սի իսթրի միջազգային ցանցը ներառում է 64 երկիր և տարածաշրջան:

www.hsbc.am
+374 60 655 000

www.fininfo.am

«ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՆՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՒՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ - ՁԵՁ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Իրավաբանորեն հաստատված է:
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տեղյան 66
Գրանցման համար 67

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2020
Բոլոր իրավունքները պահպանված են: